ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնք
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 օգոստոսի 2018թ N 87 –Ա

<<ԳԵՎՄԱՐ>> ՍՊԸ-Ի ՀԵՏ 2016թ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 13-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Ընդերքի մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածների 1-ին մասերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի ապահանջների կարգով, ՀՀ Կառավարության 12.04.2001թ N286 որոշման 44-րդ կետի ը ենթակետով և հիմք ընդունելով Կողբ համայնքի ավագանու 25.07.2018թ N31- Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.<<Գեվմար>> ՍՊԸ-ի հետ 01.09.2016թ կնքված հողամասի վարձակալության պայմանագրում 3,2461 հա հողամասը փոխարինել 15,62123հա-ով:

2.Պայմանագրում նախատեսված 178000 դրամը դարձնել 312000դրամ, 1հա տարեկան վարձավճարի չափ սահմանել՝ 20000դրամ:

3.Սույն որոշմամբ հաստատված պայմանագրի փոփոխությունները ենթակա են նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա գրանցման՝ անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեի կողմից:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ